Հուսիկ Արա

Մուգ կարմիր սյուիտ

Հետպատերազմ: Կեսգիշեր:
Քամին կանգնել է,
բայց ավերվում է ամեն բան շուրջը և աշխարհում.
վեր եմ թռչում քնի մեջ
և խեղդող հազի միջից ճչում.
-Ճշմարտությունն ա՛յն է, որ դուք պետք է ապրեիք:

Ո՛չ մի հող ի զորու չէ ամփոփել ձեզ,
ո՛չ մի երկինք ձեզ չի կարող տեղավորել,
չի լցնելու ձեր դատարկը ո՛չ թանկ, ո՛չ սուրբ,
ձեր կորուստը չի չափելու ո՛չ մի արժեք.
դուք կյանքն էիք՝ բացարձա՛կը տիեզերքում:

Երկրով վճարեցիք երկնքի համար,
հիմա ձեր երկինքն է մեր երկիրը,
դուք վճարեցիք, որ մենք հիշենք.
-Հայրենիքները չեն վաճառվում:

Մենք խմում ենք և պատերազմով լցվում.
պարտադիր մի բաժակ լիքը՝
վրան հացի շերտ,
ձեր օդին է սեղանի անկյունում՝
դռան կողմը նայող.

ներս չեք մտնում,
որ պատերազմը հանենք մեր միջից:

-Ես ջրում եմ վարդերը
և խնամում ամեն առավոտ.
նրանք ծաղկում են գարնանը,
ծաղկում են ամռանը
և աշնան են ծաղկում,
և ձմռան ձյուների մեջ.
պատերազմի ծաղիկներն են,
որ բուրում են,-
գրել է աղջիկը լուսաբացի պատին:

Անձրևը լվացել է քաղաքը,
մաքրել՝ ինչն անցյալ է:
Մենք դուրս ենք գալիս տնից
ու քայլում ծեգի միջով թաց.
ոչ մի տեղ են ձեր հետքերը,
ձեր ստվերից մաս չի մնացել:

Սրճարանում,
գինետանը,
այգու նստարանին
չեն երևում ձեր բացակա տեղերը.
չկաք աչքերի մեջ մեզ նայող
և հայացքներում, որ նայում են մեզնից:

Քաղաքը թերթել է էջը
կարմիր մելան ձեր արյունով գրված,
ու փակել՝ հին պատմություն:
-Ուրախ է կյանքը ու զվարթ,-
գրել է քաղաքը
նոր բացված էջին ազատ:

Քաղաքը չի հիշում ձեր արյունը,
ինչպես՝ արյունները ձեզնից առաջ:
Քաղաքը երգում է,
պարում է
ու զվաճանում.
քաղաքը մոռացել է:

Մենք խմում ենք, որ դատարկվենք պատերազմից,
բայց խմում ենք և պատերազմով լցվում.
մեզ հետ եք,
նույն սեղանի շուրջը.
հաց չեք կիսում,
որ ամբողջանանք
և պատերազմը ավարտենք:

-Երբ ասում են՝ պատմիր:
-Ամուսինս առաջին կռիվն էր,- ասում եմ:
-Պատմիր հետոն:
-Երկրորդ կռիվը մեծ տղաս էր:
– Ուրիշ պատմիր:
-Կրտսեր որդիս կռիվն էր երրորդ,-
սա է պատմությունը պատերազմից մնացած կնոջ,
որ տեղավորվում է պատերազմի թողած թղթին:

Պատերազմից հետո օրացույցը
շարունակությունը չէ
պատերազմից առաջ օրացույցի.
օրերը չեն նշվում
սովորական թվերով իրար հաջորդող:
Մենք հաշվում ենք,
թե քանի աճյուն են փրկարարները գտել
թշնամուն հանձնած մեր տարածքներից:
Փետրվարի 9 – 6 աճյուն. 4-ը՝ ժամկետային, 2-ը՝ կամավոր:

Մայիսի 13 – 5 աճյուն. 1-ը՝ խաղաղ բնակիչ:
Օգոստոսի 27 – 3 աճյուն և մարմնի մասունքներ.
բոլորն էլ անճանաչելի:

Կան օրեր, որ չեն նշվում,
ուղղակի 0 են՝ դատարկ ու փուչ միավոր.
որովհետև ձյան պատճառով ընդհատվել են որոնումները,
որովհետև հակառակորդը թույլ չի տալիս շարունակել:

Մենք խմում ենք, որ հաշիվը մոռանանք,
բայց խմում ենք ու շարունակ հաշվում
թիվը զոհերի.
երկրից հանում ենք և գումարում երկնքին,
որ մեր իմացած միակ թվաբանությունն է:

Եվ ամիսը 30 օր չէ, կամ 31,
512 է, 935, 1669… որ շարունակվում է
գտնված աճյունների թվով:

Շաբաթվա օրերը
չունեն պարզ անուններ՝
երկուշաբթիից մինչև կիրակի,
տարբերում ենք՝ հաջորդաբար գրելով.
18 տարեկան, 19 տարեկան,
նրանք 20 են…
պարզապես տղաներ երիտասարդ:

Մենք խմում ենք, որ չճոճվենք հողի վրա,
բայց ամեն բաժակ խումից հետո ծիծաղում ենք,
ու խելագարվում մի քիչ ավելի
և հողը ճաքում է մեր ոտքերի տակ:

-Առաջնեկիս սպասել էի 16 տարի,
իմ միակն էր.

հիմա անուն է գրված քարին:
Փայփայում եմ ամեն տառը,
հորինում եմ նորից.
իմ սեփական այբուբենն է
և իմացած լեզուն է մի բառ:

-Նույն խրամատում մնացին
երկու եղբայր՝ երկվորյակներ.
զինադադար է,
բայց կրակում են նրանց զենքերը
իմ ուղղությամբ՝ սրտիս վրա.
իմ զույգ ձեռքերն են:

Պատերազմի մայրերը չեն նրանք,
բայց նրանց մայրը պատերազմն է,
որ ամեն օր սկսվում է ու չի ավարտվում:

Մենք խմում ենք, որ պատերազմը տեղավորենք մեր մեջ,
բայց խմում ենք և պատերազմ է ժայթքում մեր միջից:
Մենք դուք ենք.
մեր մարմինները քայլում են ձեր հոգիներով,
որովհետև մեր հոգին սպանվեց ձեր մարմնի հետ.
դուք ապրում եք, մենք ենք զոհվել:
Ավելի շատ երկնքում ենք՝ ձեզ հետ,
քան այստեղ ենք՝ երկրի վրա,
որ ժամանակ է գերեզմանների.
մեռածներս այցելում ենք ողջերին:

-Պատերազմը չի ավարտվում
հրանոթի վերջին կրակոցով մարտադաշտում,
շարունակվում է ապրողների մեջ.
զոհերը չեն մոռանում ողջերին,
և մենք ամեն վայրկյան
նրանց զենքով կրակում ենք մեզ,-

ասում է զոհվածի հայրը՝
հին զենքի մարդ նախորդ կռվից:

Պատերազմը սիրելու ժամանակն է ավերում
և սրտի տարածությունն է կրճատում պատերազմը.
պատերազմի ժամանակ օրերն են սև,
պատերազմից հետո ժամանակն է սև օրեր:

Պատերազմի աղմուկից ուժգին
պատերազմի լռությունն է,
որ հոսում է մեր մաշկի տակ
և այրում ամեն բջիջ ու նյարթաթել լավայի պես:

Մենք խմում ենք ընթրիքին
ձեր արյունը որպես գինի
և ուտում ենք ձեր մարմինը
ինչպես հաց.
թաթախում ենք
ձեր մարմինը ձեր արյան մեջ
ու կուլ տալիս
և բաժանում շուրջբոլորը,
որ ճաշակեն ու հագենան:
Մենք խմում ենք սև գիշերը սև գինի,
որ մոռանանք Քրոնոսն ենք՝
սև ժամանակը,
որ խժռեց իր զավակներին: